



ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Հ Ր Ա Մ Ա Ն

№ 69 851 06 04 201 8թ.

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԼՐԱՑՈՒՑԻՉ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԵՎ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՎՃԱՐԱԶԱՓԵՐԸ ԵՎ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Երևանի պետական համալսարանի (այսուհետ՝ ԵՊՀ) կողմից լրացուցիչ ծառայությունների և փաստաթղթերի տրամադրման գործընթացը կանոնակարգելու նպատակով, ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կանոնադրության 56-րդ կետի 10-րդ ենթակետի պահանջներով՝

հ ր ա մ ա յ ու մ ե մ .

1. Երևանի պետական համալսարանի կողմից տրամադրվող ներքոհիշյալ ծառայությունների և փաստաթղթերի համար սահմանել հետևյալ վճարաչափերը և տրամադրման ժամկետները.

ա. ԵՊՀ-ում ուսումնառության (ինգամյա կրթություն, բակալավրիատ, մագիստրատուրա, ասպիրանտուրա) վերաբերյալ տեղեկանքի տրամադրում՝ մինչև 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում - 1000 ՀՀ դրամ,

բ. ԵՊՀ-ում աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանքի տրամադրում (ներառյալ՝ ժամավճարային հիմունքներով և համատեղությամբ կատարված աշխատանքի)՝ 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում - 1000 ՀՀ դրամ,

գ. դիպլոմի կրկնօրինակի տրամադրում՝ 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում - 10000 ՀՀ դրամ,

դ. դիպլոմի հավելվածի կրկնօրինակի տրամադրում՝ 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում - 5000 ՀՀ դրամ,

ե. ակադեմիական տեղեկանքի տրամադրում՝ 7 (յոթ) աշխատանքային օրվա ընթացքում - 5000 ՀՀ դրամ,

զ. ուսանողական տոմսի կրկնօրինակի տրամադրում՝ 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում - 5000 ՀՀ դրամ,

է. ստուգման գրքույկի կրկնօրինակի տրամադրում՝ 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում - 5000 ՀՀ դրամ,

ը. հատուկ ծրագրով քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակների պահեստային միջին բուժաշխատողի որակավորման վկայականի տրամադրում՝ 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում - 5000 ՀՀ դրամ,

թ. արտասահմանյան կազմակերպությունների հարցմամբ ԵՊՀ կողմից տրված դիպլոմի և դիպլոմի հավելվածի իսկության հաստատում՝ սահմանված վարձավճարը կատարելուց հետո 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում - 100 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ,

ժ. ԵՊՀ-ի կողմից տրամադրվող փաստաթղթերի թարգմանություն՝ 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում - 5000 ՀՀ դրամ,

ժա. թարգմանված փաստաթղթերի հաստատում՝ 2 (երկու) աշխատանքային օրվա ընթացքում (յուրաքանչյուր էջի արժեքը)՝ - 1000 ՀՀ դրամ,

ժբ. նոր ձևանմուշի դիպլոմի հավելվածի (15 թերթ) հաստատում՝ 2 (երկու) աշխատանքային օրվա ընթացքում - 2000 ՀՀ դրամ,

ժգ. ապոստիլ դնելու համար անհրաժեշտ ԵՊՀ փաստաթղթերի նախապատրաստում՝ 2 (երկու) աշխատանքային օրվա ընթացքում - 2000 դրամ

ժդ. 2007 թվականից հետո ուսումնառած առարկաների նկարագրիչների հաստատում և թարգմանություն (անգլերեն)՝ մինչև 30 էջ թարգմանության համար՝ 10 (տասը) աշխատանքային օր, 30 էջից ավելիի դեպքում՝ 12 (տասներկու) աշխատանքային օր - առաջին 5 էջի համար 5000 ՀՀ դրամ, հաջորդող յուրաքանչյուր էջի համար՝ 1000 ՀՀ դրամ:

ժե. մինչև 2007թ. ուսումնառած առարկաների նկարագրիչների հաստատումը և թարգմանությունը (անգլերեն) կատարվում է դրանց առկայության դեպքում՝ 20 (քսան) աշխատանքային օրվա ընթացքում - առաջին 5 էջի համար 5000 ՀՀ դրամ, հաջորդող յուրաքանչյուր էջի համար՝ 1000 ՀՀ դրամ,

2. Սույն հրամանի 1-ին կետի «ա»-ից «ը» ենթակետերով նախատեսված փաստաթղթերի տրամադրման համար սահմանված վճարներ կատարելու պահանջը չի տարածվում ԵՊՀ աշխատողների վրա:

3. Սույն հրամանի «ժդ» և «ժե» ենթակետերով սահմանված՝ առարկաների նկարագրիչները ֆակուլտետները պարտավոր են ԵՊՀ միջազգային համագործակցության վարչության պահանջով ներկայացնել 3 աշխատանքային օրվա ընթացքում:

4. Սույն հրամանի 1-ին կետի «ա» և «ե» ենթակետերով նախատեսված փաստաթղթերի տրամադրման համար սահմանված վճարներ կատարելու պահանջը չի տարածվում ԵՊՀ-ում տվյալ պահին սովորող ուսանողների վրա:

5. ԵՊՀ-ի կողմից տրամադրված փաստաթղթերում ԵՊՀ աշխատողների մեղքով թույլ տրված վրիպակներն ուղղելու և նոր փաստաթուղթ տրամադրելու համար սույն հրամանում սահմանված վճարները չեն գանձվում:


6. Սույն հրամանի ընդունման պահից ուժը կորցրած ճանաչել ԵՊՀ ռեկտորի 26.05.2017թ. թիվ 96Ը28 հրամանը:

7. Սույն հրամանի նկատմամբ վերահսկողությունը վերապահել ԵՊՀ ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորին (Ա. Գրիգորյան) և ԵՊՀ գիտական քաղաքականության և միջազգային համագործակցության գծով պրոռեկտորին (Գ. Գևորգյան):

8. Սույն հրամանի մասին սահմանված կարգով տեղեկացնել ԵՊՀ ուսումնամեթոդական վարչությանը, միջազգային համագործակցության վարչությանը, հաշվապահությանը, արխիվին և ֆակուլտետներին:

9. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ԵՊՀ ՌԵԿՏՈՐ



Ա. Հ. ՄԻՄՈՆՅԱՆ